Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-279-31.05.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) Կառավարության սահմանած կարգով իրականացնել անչափահաս մեղադրյալի, մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ վարչական իրավախախտում կատարած անչափահասի, բացառությամբ Վարչական իրավախախումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով վարչական պատասխանատվությունից ազատելու դեպքերի, երկու կամ ավելի անգամ բնակության վայրը ինքնակամ լքած մինչեւ 16 տարեկան անչափահասի, մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման հիման վրա պարտադիր ուսուցումից 120 եւ ավելի ժամաքանակ դասեր անհարգելի բաց թողած, թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ, շահումով խաղերով զբաղվող, ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութեր օգտագործող անչափահասի, ազատազրկման ձեւով պատիժը կրած անչափահասի, դատարանի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետեւանքով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի, ում վարքագծի նկատմամբ հետագա վերահսկողությունը դրվել է ոստիկանության վրա, անչափահասի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով, ինչպես նաեւ անչափահասի վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) հաշվառում:»:

Հոդված 2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքի ընդունումից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված նախագիծ
երկրերդ ընթերցում-

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի ~~4-ի~~ **16-ի** ՀՕ-177 օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) Կառավարության սահմանած կարգով իրականացնել անչափահաս մեղադրյալի, մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ վարչական իրավախախտում կատարած անչափահասի, բացառությամբ Վարչական իրավախախումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով վարչական պատասխանատվությունից ~~ազատված~~ **ազատելու** դեպքերի, ~~հանցանքը կատարելու պահին քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անչափահասի~~, երկու կամ ավելի անգամ բնակության վայրը ինքնակամ լքած մինչեւ 16 տարեկան անչափահասի, մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման հիման վրա պարտադիր ուսուցումից 120 եւ ավելի ժամաքանակ դասեր անհարգելի բաց թողած, թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ, շահումով խաղերով զբաղվող, ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութեր օգտագործող անչափահասի, ազատազրկման ձեւով պատիժը կրած անչափահասի, դատարանի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետեւանքով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի, ում վարքագծի նկատմամբ հետագա վերահսկողությունը դրվել է ոստիկանության վրա, ~~համաներման հետեւանքով պատժից կամ քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի, ռեաբիլիտացնող հանգամանքներով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի~~, **անչափահասի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով,** ինչպես նաեւ անչափահասի վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) հաշվառում:»:

Հոդված 2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքի ընդունումից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-279-31.05.2022-ՊԱ-011/1*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է շտկել «Ոստիկանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունման ամսաթվում առկա վրիպակը՝ «4-ի» թիվը փոխարինելով «16-ի» թվով:	***Ընդունվել է:*** Նախագծի 1-ին հոդվածում «Ոստիկանության մասին» օրենքի ընդունման ամսաթիվում առկա վրիպակը՝ «4-ի» թիվը փոխարինվել է «16-ի» թվով:	Ընդունվել է
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածից հանել «հանցանքը կատարելու պահին քրեական պատասխանատվության համար սահմանված	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածից հանվել է «հանցանքը կատարելու պահին քրեական	Ընդունվել է

			տարիքի չհասած անչափահասի,» և «համաներման հետեւանքով պատժից կամ քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի,» բառերը, իսկ «ռեաբիլիտացնող հանգամանքներով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի» բառերը՝ «անչափահասի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով» բառերով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ արարքի կատարման պահին քրեական պատասխանատվության ենթարկելու՝	պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անչափահասի,» և «համաներման հետեւանքով պատժից կամ քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի,» բառերը, «ռեաբիլիտացնող հանգամանքներով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասի» բառերը փոխարինել «անչափահասի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով» բառերով:	

			օրենքով նախատեսված տարիքին հասած չլինելու և անձի՝ համաներմամբ քրեական պատասխանատվությունից ազատման հանգամանքները ևս համարվում են ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներ:		
3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5-րդ կետում «մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ վարչական իրավախախտում կատարած անչափահասի, բացառությամբ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածով վարչական պատասխանատվությունից ազատված դեպքերի» ձեւակերպման մեջ «ազատված» բառը	***Ընդունվել է*** Նախագծի 1-ին հոդվածում «ազատված» բառը փոխարինվել է «ազատելու» բառով:	Ընդունվել է

			փոխարինել «ազատելու» բառով:		